



Էլեկտրոնային Գրքերի Պատրաստման Ուղեցույց

Մհեր Խաչատրյան

© Մհեր Խաչատրյան 2015

Այս ուղեցույցի ցանկացած ձևով և եղանակով վերարտադրությունն ու տարածումը թույլատրվում է միայն դրա անբողջականությունը չխախտելու և այն չվաճառելու պայմանով:

Հրատարակվել է Յուփաբում (upub.am)

Բովանդակություն

Նախաբան

Քայլ 1 - Ստեղծել ֆայլի պատճենը:

Քայլ 2 - Պարզեցնել էջերի ձևավորումը:

Քայլ 3 - Ակտիվացնել Show/Hide ֆունկցիան:

Քայլ 4 - Անջատել Word-ի AutoCorrect/AutoFormat As You Type և AutoFormat ֆունկցիաները:

Քայլ 5 - Մաքրել տեքստի բոլոր չափանշումները:

Քայլ 6 - Լրացնել գրքի մետատվյալները (կամընտրական):

Քայլ 7 - Ընտրել տեքստային համապատասխան ոճ կամ ստեղծել նորը:

Քայլ 8 - Ընտրել պարբերությունները տարանջատելու եղանակը (տողագլխով կամ անջատ պարբերություններ):

Քայլ 9 - Սահմանել տեքստի տառերի գույնը:

Քայլ 10 - Մաքրել Tab և Space ստեղծումների չտպվող սիմվոլները:

Քայլ 11 - Կարգաբերել պարբերությունները:

Քայլ 12 - Ավտոմատացնել էջարնդհատումները:

Քայլ 13 - Ներդնել նկարներ:

Քայլ 14 - Տեքստը հավասարեցնել՝ ըստ ձախ կողմի:

Քայլ 15 - Տեքստը հավասարեցնել՝ ըստ կենտրոնի:

Քայլ 16 - Սահմանել տառաչափերն ու էջաչափերը:

Քայլ 17 - Ստեղծել գերհղումներ:

Քայլ 18 - Ավելացնել գրքի սկզբնամասը:

Քայլ 19 - Ավելացնել գրքի վերջնամասը:

Քայլ 20 - Ստեղծել գրքի շապիկը:

Քայլ 21 - Ստուգել ֆայլի փոխարկված տարբերակները:

Վերջաբան

Հեղինակի մասին

Նախաբան

«Էլեկտրոնային գրքերի պատրաստման ուղեցույցի» նպատակն է օգնել հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին՝ արագորեն և հեշտորեն չափանշելու իրենց գրքերի էլեկտրոնային տարբերակները կամ նոր էլ. գիրք հրատարակել: Այն հանրամատչելի է, չի ենթադրում հատուկ տեխնիկական գիտելիքներ և կոչված է օժանդակելու բոլոր հեղինակներին ինքնուրույն պատրաստել և թողարկել բարձրակարգ և միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան էլ. գրքեր՝ օգտագործելով նվազագույն ռեսուրսներ: Դրա համար ընդամենը պետք է ունենալ համակարգիչ, որն ունի Microsoft Office Word տեքստային խմբագրիչը և, իհարկե, բավականաչափ ցանկություն:

Նշենք, որ էլ. գրքեր պատրաստելու միասնական եղանակ գոյություն չունի: Կան մի շարք ճանապարհներ, որոնցից ամենահարմարը, մեր կարծիքով, Microsoft Word ծրագրային միջոցն է: Այն բավականին մատչելի է և օգտագործվում է բազում հայ հեղինակների և հրատարակիչների կողմից: Սրան գումարած, *.DOC կամ *.DOCX ձևաչափի ֆայլը հեշտությամբ կարելի է փոխարկել բազում այլ ձևաչափի ֆայլերի (*.PDF, *.HTML, *.EPUB և այլն), ինչը ձեր գիրքն առավելագույնս մատչելի կդարձնի ընթերցասերների համար: Դուք կարող եք օգտագործել Microsoft Word-ի ցանկացած տարբերակ (Word 2003, Word 2007 և այլն):

Մինչ մեր քայլ առ քայլ հրահանգներին անցնելը, հակիրճ կերպով ներկայացնենք էլեկտրոնային և տպագիր գրքերի չափանշման միջև եղած տարբերությունները:

Տպագիր գիրքն ունի հաստատուն ձևաչափ և էջերի հստակ դասավորություն: Մենք վերահսկում ենք ամեն ինչ՝ սկսած տառատեսակից, վերջացրած այս կամ այն էջում նկարների տեղադրումից: Մի խոսքով, տպագրված գիրքը մեզ ներկայանում է ճիշտ այնպես, ինչպես երևում է համակարգչի էկրանին:

Էլ. գրքերի դեպքում բանն այլ է: Դրանք հաստատուն էջեր չունեն և պատրաստված են այնպես, որպեսզի ապահովեն տեքստի շարունակական վերադասավորումը: Այսինքն՝ կախված էկրանի չափից (iPhone, iPad, Kindle և այլն)՝ ձեր տեքստի բառերը և պարբերությունները կարող են անընդհատ տեղափոխվել և վերադասավորվել: Այս ճկուն սկզբունքը թույլ է տալիս ընթերցողին տեքստի տառատեսակը, տողերի միջև հեռավորությունը և դրա մի շարք այլ հատկություններ հարմարեցնել սեփական նախասիրություններին:

Այս գիրքն անվճար է և նրա ամբողջական տարբերակը կարդալու համար անհրաժեշտ է ձեռք բերել այն և ներբեռնել Ի՛ն գրքեր բաժնից:

Անցնել գրքի էջ